

**ՊԱՇՏՈՆ****ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ****ԱՃԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ****ԱՃԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ****ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ**

Հեռախոսազանգերի կենտրոն, Տեղեկատվական խմբի մասնագետ

ճկուն հերթափոխային գրաֆիկ(հանգստյան օրերն ըստ գրաֆիկի)

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

19/12/2022

04/01/2023

Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի Հեռախոսազանգերի կենտրոնի Տեղեկատվական խմբի մասնագետի հաստիքը զբաղեցնելու համար, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

**ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Բանկի հեռահար ծառայություններից օգտվող հաճախորդներին տեխնիկական աջակցության տրամադրում ռուտերեն լեզվով,
- Մուտքային զանգերի սպասարկում ռուտերեն լեզվով,
- Ելքային զանգերի իրականացում ռուտերեն լեզվով,
- Օտարազգի հաճախորդների հետ գրավոր հաղորդակցում,
- Բանկային ծառայությունների վերաբերյալ հաճախորդներին համալիր տեղեկատվության տրամադրում,
- Հաճախորդների խնդիրների բացահայտում և լուծման առաջարկների ներկայացում,
- Բանկի կողմից սահմանված մուտքային զանգերի և գրավոր հաղորդակցման վերաբերյալ ցուցանիշների ապահովում,
- Հեռախոսազանգերի կենտրոնի հետ առնչվող այլ աշխատանքների իրականացում:

**ՊԱՅՄԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

- Բարձրագույն կրթություն (կոնիտարկվեն նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողները),
- Ռուտերեն, անգլերեն լեզուների գերազանց իմացություն,
- Համապատասխան փորձի առկայությունը կոնիտվի որպես առավելություն,
- Համակարգչային գիտելիքներ,
- Հաղորդակցվելու և թիմում աշխատելու հմտություններ,
- Բանակցելու և խնդիրներ լուծելու հմտություններ,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն,
- Կազմակերպչական հմտություններ:

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## **ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել [hr@idbank.am](mailto:hr@idbank.am) էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

## **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>